



Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՋԳԸՅԻՆ, ԻԸՆԸՍԻՐԿԸՆ, ԴՐԸԳԻՏԸԿԸՆ  
ԵՒ ՔԸԴԸՔԸԿԸՆ


ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ  
ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՅ



ՅԵՐՈՒՍԸԴԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԼԱՆՑ

1876



ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ  
ԹԻՒ 5.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՄԱՅԻՍ 31  
1876.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆՍԱԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿ

ԳԱՂԱԳԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ

Երբ միջնորդութի մէջ այն մեծ արհաւիրքներէն մին կը պատարաստուի, ուրով գոգցես համօրէն բնութիւնն կը նկրտի իւր խանգարուած հաւատարաւ կշռութիւնն ձեռք բերել, այն ժամաւ նախ կը տեսնուի որ բոլոր կենդանիք սրշտորուած են մի գաղտնի և անպատում յուզմամբ, Թռչունք վրդովուած՝ վեր ՚ի վայր կը թռանին, միմեանց կրնգհարին, խաղաձեւ ճանապարհներ կը գծեն եւ շտապաւ իրենց բոյներն կ'որոնեն, որոյ ճանապարհն գոգցես մեռացած են: Անասունք հատկեալ և խռովեալ հազիւ հազ կը շնչեն: Տէրեւք իսկ կը տատանին անշարժ օդոյն

Ժ.Ա.

մէջ: Համօրէն բնութիւնն գոգցես կը պատրաստուի մի սոսկալի տեսարանի համար: Ամեն արտաճենք առ վայր ինչ գոգցես մի շունչ կը շնչեն, մի կեանքով կը շարժին, քանզի սոսկումն հաւտարակ է ամենեցուն:

Ընկերական միջնորդութի մեծամեծ ճգնաժամերն եւս սոյնօրի նախընթաց երեւոյթներն ունին: Ամեն տէրեւ կը շարժի մարդկային ազգի մեծատարած անառիկ մէջ: Մի չփոթ բնազդումն երկիւղ կը զարթուցանէ ընկերութեան յետին դատաւարդերուն մէջ, յետին խորերուն մէջ: Ամենէն անդրադարձ և թմրած մարդն անգամ կը

խաղի և կը յուզի : Ամենէն տգէտն և թշուառն , որոյ տեսութիւնն ու միտքն ամբողջութեամբ են անձուկ չըջանի մէջ , կը վրդովի եւ կը տագնաւի : Ամեն բերան կը մարդարէանայ : Ամեն բերան կը գուշակէ : Այս ընդհանուր թախ-  
ծութեան մէջ գոգցես մարդկութիւնն իւր վերջին շունչն պիտի փչէ : Տեղ տեղ հարցումներն պարզ առաջարկուած են . բայց ամեն տեղ մի հարցումն աւելի կը կրկնուի . — Ո՞ր կ'երթանք : Կառքի մէջ քնացած ճանապարհորդի նման կը զարթնու մարդկութիւնն , երբ յանկարծ զգացման մի արագա-  
սահ զառ ՚ի վայրի կը հանդիպի :

Սակայն ամեն ժամանակ փոթորիկն չըգար փոթորիկի նախազգացումէն յետոյ : Շատ անգամ մթնոլորտի անորոշ դրութենէն զինի՝ կը տեսնես , որ երկինքն իրեն սովորական կերպարանն կը ստանայ , օդն՝ իւր ձգողական զօրութիւնն , բնութիւնն՝ իւր նախկին տեսքն : Թէ և տեղի ունեցաւ մթնոլորտի մէջ յեղափոխութիւն , բայց հաւասարա-  
կշուութիւնն հաստատեցաւ , բնութիւնն իւր նպատակին հասաւ եւ կենդանի արարածոց նախազգացումներն արդարացան նոյն իսկ իրենց պատրաս-  
նաց մէջ :

Այնպիսի քաղաքական կացութիւններ կան , որ յանդգնութիւն կը լինի գուշակել՝ թէ հրոյ և սրոյ այս ինչ սոսկալի երեւոյթն այս ինչ լուծումն պիտի ստանայ : Ինչպէս ընկերական , նոյնպէս և ֆիզիքական աշխարհի մէջ Նախասնամութիւնն է , որ միայն գիտէ եւ կը ճանաչէ անակնկալ խոտորու-  
մներն և խոտորեցուցիչ զօրութեանց պատճառներն : Նախասնամութիւնն իւր մեղ շրջապատող իրողութեանց մէջ այնչափ բաղմամբատկած է փո-  
փոխումներն եւ իրենց լուծումներն ու ելքերն , որ անկարող ենք ամէ-

նրն ըմբռնել եւ հասկանալ : Մեր այսչափ միայն գիտեմք հաւաստեալ , թէ Նախասնամութիւնն այնպէս կարգադրած է ամեն բան , որ ոչ պատճառն կարէ ստել իւր հետեւանաց , ոչ սկզբունքն՝ իւր եղբակացութեան , ոչ գաղափարն՝ իւր զարգացման կամ ընդլայնման : Նախասնամութիւնն ամեն բան կարգադրած է կշռով , համարով , թուով և չափով : Թէեւ միջոցներն բաղմամբատկ են , բայց նըպատակն մի է և անփոփոխ :

Քանի որ այսպէս է , ՚ի բաց կը թողունք մեք ամեն գուշակութիւն , ամեն քաղեղութիւն , չենք համարձա-  
կիր ապագայ ճանապարհին իջեւաններ ծրագրել , կայսրաններ հաստա-  
տել , այլ միայն կ'աւեմք որ ներկայ վայրկեանն յի է մեծամեծ նախազգացումներով և ակնկալութեամբ : Բազմութիւնն գոգցես հասկնալ կը չնէ բնազգման ծանր ճնշման տակ : Աշխարհ համայն կըսպասէ . աշխարհ համայն ականջ կը դնէ . ղէն ՚ի ձեռս կը ննջէ մարդ և խաղաղութեան համար խորհելէն զինի , պատերազմ կ'երազէ : Ամեն դրութիւն կասկածաւոր է . ամեն խորհուրդ անհաստատ . ամեն յարբերութիւն ձգտեալ և գոգցես ամեն ինչ կը նկրտի վախճան ստանալ , եւք ստանալ :

Մի մեծ հարց , մի մասամբ նոր խնդիր կ'առաջարկուի ահա մեր հին աշխարհի մէջ : Ի՞նչ է այս խնդիրն , ի՞նչ է այս հարցն : Երկար ժամանակ է , որ հազարաւոր օրագիրներ , հազարաւոր դրածքներ , քաղաքական բեմերու հազարաւոր արձագանքներ յաճախ կը կրկնեն սոյն հարցն : Եւ ի՞նչ է այս հարցն . — Ոչ այլ ինչ , եթէ ոչ , որ ներկայն կը բաժնուի յանցելոյն . նոր ձեւն կառավարչական կը փոխ-  
նորդէ հնոյն . պատանքն կը պատուի

եւ դերի բռնուած տպագայն դուրս  
կ'ելին իրրեւ որդն մետաքսագործ իւր  
բոժոժի մէջէն : Այս ամենն շատ պարզ  
է . այսպիսի կերպարանափոխութիւն-  
ներ գրեթէ ամեն ժամանակ կը պա-  
տահին : Աշխարհի անասան յառա-  
ջագիմութիւնն ուրիշ բան է , եւ այն  
է , ինչ որ մենք կը տեսնենք : Ընկերա-  
կան յառաջագիմութիւնն ուժգին ու-  
տումներով կը կատարուի , յորոյ միայն  
այն կը սպառի եւ միւսն կը յաջորդէ .  
ուստի եւ շատ հաւանական է , որ ներ-  
կայ վայրկեանս այն ուժգին ուտում-  
ներէն մին է , որով իրրեւ պարանի  
հանգոյցներով կը չափուի մարդկու-  
թեան նաւու շարժումն : Բայց ինչ է  
այս շարժման անուան : Ի՞նչ ծովեր ,  
ինչ երկիր կը դիմէ այն նաւն : Ո՞րն է  
մարդկութեան վախճանի ճշմարիտ կա-  
տարումն : — Հապաքե՛լ , որ մարդն  
միայն յաւիտենականութեան մէջ խա-  
րիստ կը ձգէ . յաւիտենականութիւնն  
է ճշմարիտ նաւահանգիստն , եւ այն  
տեսանելի աշխարհիս փոփոխութիւն-  
ներն ու յեղաշրջումներն ենթարկուած  
են Աստուծոյ գիտաւորութեան , որ  
ունի անտեսանելի աշխարհին նկատ-  
մամբ : Փիլիսոփայութիւնն ամենեւին վերջ  
նական սահման չը դնէր մարդկային  
վիճակի այն փոփոխութեան եւ զար-  
գացման : Փիլիսոփայութեան համար  
մարդկային ազգի կատարեալ վախճանն  
կամ ճակատագիրն ոչ այլ ինչ է , եթէ  
ոչ մի աստիճան առ աստիճան եւ ան-  
սահման կատարելագործութիւն ընկե-  
րական վիճակի . մի մշտատեւ եւ ա-  
ւելի եռանդուն գործունէութիւն , մի  
տեւական եւ աւելի ներգաշնակ յա-  
ռաջադարձութիւն . ահա այս է մեր  
յիշդ յաւիտեան անհանգիստական դի-  
ճըն : Իբր գլուխ ամեն յառաջդի-  
մական տարբայ՝ մեր դարն ընդու-  
նած է զաղատութիւնն , որոյ ներքեւ

ինքնին կ'իմացուի հաւասարութիւնն  
իրրեւ երաշխաւորութիւն եւ արդիւնք  
ազատութեան :

Սակայն հարեւանցի դիտողներն եւ  
սխալ վճիռներու սիրահարներն են մի-  
այն , որոնք կ'տան ամեն օր . — Ահա  
հասած է վերջին կռիւն ազատութեան :  
Վերջին կռիւն աղապարհութեան : Ազատու-  
թիւնն մինչեւ աշխարհիս վերջն կռիւ-  
ներ պիտի ունենայ , վասն զի ընկերա-  
կան կազմակերպութեան ամեն կարելի  
եղած ձեւերու ներքեւ ազատութիւ-  
նն թշնամիներ պիտի ունենայ : Կռիւ-  
աղապարհութեան : Եւ ի՞նչ է այս կռիւն ,  
եթէ ոչ նոյն ինքն ազատութիւնն ,  
որ կը մարտնչի բռնակալութեան դէմ :  
Բայց մի թէ ապերասանութիւնն եւս  
չը մարտնչէր բարեկարգութեան սիրդ-  
բան դէմ : Միթէ չե՞նք տեսներ շա-  
տանգամ , որ մարդկային գերգաստանն  
երկու մասն կը բաժնուի , մին կը հա-  
մախմբի այս ինչ բառի շուրջն եւ միւսն  
այն ինչ բառի : Մին զայս կը պաշտ-  
պանէ եւ միւսն զայն : Այս երկու կու-  
տակութիւններէն կամ խումբերէն ո՞-  
րուն կը պատկանի արդեօք իրաւուն-  
քն . ո՞ր խումբն արդեօք աւելի լաւ  
կազմուած է : Ստուգիւ կը խօսիմք , որ  
գժուարին է պատասխանել այս հարց-  
ման : Իւրաքանչիւր խմբի կամ կու-  
տակութեան մէջ կը գտնուին թէ՛ բա-  
րեբարոյ մարդիկ եւ թէ՛ կամակոր մար-  
դիկ : Այնպէս որ երկու կուտակու-  
թեան խումբերու մէջ աւելի համակ-  
րութիւն կը նշմարուի , քան թէ իւրա-  
քանչիւր խմբի անհատներու մէջ : Ճիշ-  
մարիտ յարաբերութիւններ հաստա-  
տելու համար պէտք է իւրաքանչիւր  
խումբն վերստին բաժնել եւ իւրաքան-  
չիւր խմբի մէջ գտնուած բարեբարոյ  
մարդիկն միացնելով՝ առանձին բանտիկ  
կազմել , իսկ իւրաքանչիւր խմբի կա-  
մակորներն միացնելով՝ առանձին բա-

նակ կաղմել, վասն զի իսկական բա-  
ժանումն և իսկական անհաշտութիւնն  
այսպէս միայն կը սահմանուի — Բարի  
մարդիկ և չար մարդիկ : Այս է ահա  
ճշմարիտ կուսակցութիւնն, որով աչ-  
խարհս երկու բաժնուած է : Առա-  
ջին կուսակցութեան բոլոր անդամնե-  
րն հիմնովին մի և նոյն բանն կամին,  
իսկ երկրորդ կուսակցութեան անդա-  
մներն մի և նոյն դիտաւորութիւնն ու-  
նին : Բարութեան բոլոր ազատասէր-  
ներն բարեկարգութիւն կ'ուզեն : Բա-  
րութեան բոլոր աւելական բարեկա-  
մներն ազատութիւն կ'ուզեն, իսկ ընդ-  
հակառակն ամեն չար մարդիկ, ինչ  
դրօշակի տակ որ գտնուին, անհնա-  
րին կերպիւ կ'ատեն ազատութիւնն  
ու բարեկարգութիւնն : Ազատութիւն  
եւ բարեկարգութիւն կ'ասեմք, վա-  
սըն զի ազատութիւն և բարեկարգու-  
թիւն ոչ այլ ինչ են, եթէ ոչ երկու  
անուն ընկերական Բարօրութեան : Ո՞չ ա-  
յսպէն ազատութիւնն բարեկարգու-  
թեան մի մասն է : Ո՞չ ապաքէն բարե-  
կարգութիւնն ազատութեան երաշ-  
խաւորութիւնն է : Ո՞վ կարող է սի-  
րել մին՝ առանց միւսոյն : Ո՞չ ապա-  
քէն ազատութեան և բարեկարգու-  
թեան կամ կարգասիրութեան ար-  
մատն սրտի մի և նոյն սահմանին մէջ  
կը գտնուի : Ո՞չ ապաքէն երկրորդն  
եւս արգարութեան և մարդասիրու-  
թեան գաղափարի մի և նոյն արմատէն  
կը ծլին : Այս պատճառաւ է, որ կը  
կրկնեմք թէ աշխարհի մէջ երկու կու-  
սակցութիւններ միայն կան — Բարի  
մարդիկ և չար մարդիկ :

Այս բաժանումէն կը հետեւի ա-  
հա, քանի որ կուսակցութիւններն  
ճիշդ իրենց յատկութեամբ, այսինքն  
ի բարի և ի չար չեն որոշուած, միշտ  
իւրաքանչիւր կուսակցութեան բարե-  
բարց անդամն կը շառագնի երբ իւր

կամսկոր ընկերաց հետ կ'ընթանայ,  
ճշմարիտ ազատասէրն կը շառագնի,  
երբ այն շահախնդիր և անիշխանու-  
թիւն սիրող խաժամուժին մէջ կը գրա-  
նուի, որոնք իրեն պէս ազատութիւն  
բաժն կը կրկնեն բայց չը գիտեն թէ  
ինչ է ազատութիւնն, խաղաղասէրն  
կը շառագնի, երբ իւր շուրջն անպարծ  
և ինքնահաւան խուժան կը տեսնէ :

Քանի որ իրերն այսպէս են, ո՞վ կա-  
րող է խաղաղութեան յուսալ, ո՞վ կա-  
րող է գուշակել թէ այս ինչ տարի  
այս ինչ ամիս խաղաղութիւնն պիտի  
թաղաւորէ : Ո՞վ քննած է ժողովրդեան  
երակներն, ո՞վ զննած է ազգաց բնու-  
ւորութիւններն, ո՞վ կարող է սահման  
գնել անհատներու յուզումներուն :  
Երբ ընկերական աշխարհին մէջ փոթա-  
րիկներու երեւոյթներ կը նշմարուին,  
մարդ կարող չէ գուշակել՝ թէ ինչ  
վախճան կ'ուենենան : Հետեւապէս շատ  
անգամ կը միտալին այն մարդիկն, ո-  
րոնք կ'ուզեն ժողովրդեան բախտն ար-  
նորինել, կ'ուզեն իրենց անհատական  
խորհուրդն ու իղձն՝ իրրեւ բովան-  
դակ ընկերականութեան խորհուրդ  
եւ իղձ ծախել : Գեղեցիկ բառ է ա-  
զատութիւնն ամեն լեզուաց մէջ, եւ  
ամենագեղեցիկն կարելի էր համարել  
զայն, եթէ սէր բաժն չը լինէր : Ազա-  
տութիւնն այնպիսի մի բառ է, որուն  
ամեն մարդ կը փափագի, որուն հետ  
կապուած է մարդոց արժանաւորու-  
թիւնն, բայց միթէ ամեն մարդ մի և  
նոյն կերպիւ կը փափագի, միթէ շատ  
մարդիկ լսի ազատութեան անունէն  
չէն հրապուրուիր առանց բռն հու-  
թիւնն հասկնալու : Պատէ կ'ասէ.  
« Եթէ միանգամ խուժանն հրապու-  
րուի յանուն ազատութեան, այ-  
նուհետեւ կուրօքէն կը հետեւի, ուր  
որ առաջնորդուի, բաւական է միայն,  
որ ազատութեան անունն լսէ : Ազա-

տութեան եւ փառաց անունով շատ անգամ բաղմունքիւնն ոտքի հանուած է . երբ այս երկու բառն հնչուած են , ժողովուրդն յառաջ վազած է : Բայց մի թէ կարող ենք ասել , որ ժողովուրդըն խիստպէս հասկցած է ազատութեան նշանակութիւնն : Դեռ շատ և շատ ժամանակ պէտք է , որ ժողովուրդըն սիրէ զազատութիւնն իբրեւ ըսկրդեունք , և ոչ թէ իբրեւ ըսկ բառօգահնչիւն : Մեր հրապարակութեանըն , որք ընդհանրապէս խիստ սակաւ կը ճանաչեն զժողովուրդն , նորա հետ սակաւ յորարեբութիւն ունենալուն համար , կ'անդիտանան , որ քաղաքագիտական զազախոսներն այնչափ զիւրու չեն թափանցիր ժողովրդեան ըստորին թանձր դասու մէջ , ինչպէս որ կը թափանցին վերին նաւը դասուն մէջ : Ժողովրդեան ստորին դասերն այնչափ ծանօթութիւն չունին անցած դարձած իրողութեանց վերայ , և շատ անգամ ինչ որ քաղաքագէտներն տարիներով կը խորհին , ժողովուրդն մի օրուան մէջ կը տապալէ : Վասն զի շատ հազիւ պատահած է , որ քաղաքագէտներն այն խորհին , ինչ որ ժողովրդին օգտակար է . շատ հազիւ պատահած է , որ քաղաքագէտներն չը շեղին ընդհանուր արդարութեան ճանապարհէն : Եւ մի թէ ամեն օր չը ներկայանար մեզ սոյն ճշմարտութիւնըն , մինչդեռ կը սպասուի , որ ընկերական հօրիջնին վերայ խաղաղութեան մարդիկ երեւին , արդարութեան մարդիկ երեւին . ընդհակառակըն կ'երեւին պատերազմի մարդիկ , արիւնհեղութեան մարդիկ , զրկողութեան մարդիկ :

Եթէ խաղաղութեան մարդիկն շատ լինէին , աւելի շատ աղօթքներ պիտի բարձրանային յԱթոռ խաղաղութեան և աւելի պակաս պիտի լինէին հառա-

չանք ու հեծեծանք զրկողութեան :

Եթէ խաղաղութեան մարդիկն շատ լինէին , աւելի շատ խաղաղ խորհրդականներ պիտի լինէին թագաւորաց խորհրդարաններու և ժողովրդոց ժողովներու մէջ :

Եթէ խաղաղութեան մարդիկն շատ լինէին , աւելի շատ պաշտպաններ պիտի գտնուէին արդարութեան և ճշմարտութեան , որք հաստատուն հիմունք են խաղաղութեան :

Մենք կանխաւ տեսցինք , որ իւրաքանչիւր կուսակցութեան ծոցին մէջ կը գտնուին բարի մարդիկ . բայց կը համարձակիմք ասել , որ սոյն մարդիկն եռանդն և կարական որոշումն չունին : Սոքա է ապէս բացասական մարդիկ են : Արդարեւ նոքա չարն չեն քաջալերեր , բայց և ոչ բարին յաղթող կը հանդիսացնեն : Սոքա չարն պիտի արդիւնին , եթէ համարձակին , բայց չեն համարձակեր : Սոքա չեն համարձակիր մինչեւ անգամ իրենց փափոքն բացարձակ յայտնել : Սոքա համառումն կը ստեղծէ կարծեաց աղաղակներու առջեւ : Սոքա ինքնին համարձակ են եւ թերեւս անձնուէր . բայց երկչոտ են բառերու առջեւ :

Սոքա համառումներն խոր են և հզօր , բայց իրենք մակերեւութէն կ'ընթանան , և հառաչելով ինչ ինչ սովեստականութեան շուրջն կը դեգերին : Չարն չափաւորեւ եւ երբեմն գունաւորեւ , այս է ահա՛ սոքա խղճի վերջին ապաստանարանն կամ անդորրութեան միջոցն : Սոքա կընկճին փոթորիկի առջեւ , որ իրենցմէն յետոյ պիտի չը աւելէ : Սոքա լաւ օրերու կը սպասեն , բայց իրենց զիջողութեամբ բնաւ պիտի չը դան սոյն օրերն :

Այսպէս են մեր դարու բարի մարդիկն , իսկ մեր թշուառութեանց եւ աղէտից արուեստագէտներն աւելի

վատահ են, աւելի պարզախօս և ինչ  
ինչ նկատմամբ աւելի անձնազիր: Ի՞նչ  
է սորա պատճառն, եթէ ոչ որ մեր  
դարու բարեբարոյ մարդիկն իսկ մեծ  
հաւատ չունին արդարութեան վերայ.  
և սակայն անուրանալի ճշմարտութիւն  
է այս, որ միայն արդարութեան վերայ  
ունեցած հաւատն կարող է ճշմարիտ  
ղորութիւն տալ ազգաց: Քանի որ ար-  
դարութիւնն և իրաւունքն լոկ բա-  
ւեր են ՚ի բերան քաղաքագիտաց, ՚ի  
բերան ազգաց, ընկերականութիւնն  
տակաւին շատ փութորէններու պիտի  
հանդիպի. տակաւին շատ որոտումներ  
պիտի լսէ, տակաւին շատ պիտի ահ  
ու դողով պաշարուի:



# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ս. Էջմիածնի Սինօգէն ներկայ տար-  
ւոյս 1 Մարտ ամսաթուով և 431 թը-  
ւահամարաւ եկած Պաշտօնագիր մը  
հետեւեալը կը ծանուցանէ:

Բնիկ Ռուսիոյ Աղէքսանդրապօլ քա-  
ղաքէն Մարտիրոս Վարդապետ Տօնա-  
կանեանց՝ որ երբեմն Սրբոյն Գայիտ-  
նեայ Վանուց վանահայրն էր. 1866  
թուականին փախչելով դաղանի իւր  
պաշտօնատեղիէն՝ Աղէքսանդրապօլ  
կ'երթայ և հոն մանկավարժութեան  
կը պարապի. սակայն իւր անհանգիստ  
և խռովայոյզ բնաւորութեամբը չիւր-  
նայով մնալ հոն՝ քանի մը տարիէն  
Տաճկաստան կ'անցնի, ուր կը յաջողի  
Ղօջալանուց վանահայրութիւնը ձեռք  
բերել ու և է եղանակաւ: Բայց հոն

ալ չկրնալով շարունակել՝ առանց գի-  
տութեան կեդրոնական Կրօնական Ժու-  
ղովոյ կը գառնայ ՚ի հայրենիս իւր, և  
հոն ոչ միայն ՚ի նպաստ անձին ինքնու-  
րոյն հանգանակութիւններ ընելու,  
այլ և անվայել գնացիւք ժողովրդեան  
գայթակղութեան և բամբասանաց ա-  
ռիթ տալու կը յանդգնի: Թէեւ ՚ի  
Հոգեւոր Իշխանութենէ շատ անգամ  
կը խրատուի ու կը յանդիմանուի,  
բայց չզգաստանար բնաւ և ապերա-  
սան ընթացից մէջ կը յարատեւէ:

Մինչդեռ Ս. Էջմիածնի Սինօգը  
յիշեալ Վարդապետն ՚ի Սեւան զրկե-  
լու և հոն զանի ապաշխարանաց են-  
թարկելու վճիռ կուտայ, նա չուզե-  
լով հնազանդիլ տնօրէնութեան Հոգե-  
ւոր Իշխանութեանն՝ դաղա իմն Երե-  
ւան կը մեկնի, քաղաքական իշխանու-  
թեան կը դիմէ և բողբ կը բառնայ.  
և երբ կը տեսնէ՝ թէ ձեռնունայն կը  
մնայ իւր անիրաւ բողբանաց մէջ,  
նորէն Աղէքսանդրապօլ կ'երթայ իւր  
անուղղայ և գայթակղեցուցիչ ընթաց-  
քը շարունակելու, ընթացք մը՝ որ  
հակառակ էր կանոնաց կուսակրօն հո-  
գեւորականութեան և Քրիստոնէու-  
թեան և մարդկութեան. մանաւանդ  
զի նա առ ոչինչ գրելով իւր խռովա-  
յոյզ բնաւորութիւնը և անվայել ու  
գայթակղեցուցիչ բարքն ուղղելու հա-  
մար Հոգեւոր Իշխանութեան կողմանէ  
գործադրուած համադրական կերպե-  
րը՝ բողբորովն կ'ըմբոստանայ, եւ իւր  
ընդդէմ կանոնաց Եկեղեցւոյ և Քրիս-  
տոնէութեան վարած անառակ և ըս-  
տահակ դնացքը կ'ուզէ յառաջ տա-  
նիլ. ուստի Սինօգը ամենայն Հայոց  
Վեհ. Հայրապետի հրամանաւ լուծեց  
խսպառ ՚ի քահանայութենէ՝ յիշեալ  
Տօնականեանց Մարտիրոս Վարդապե-  
տը ըստ կանոնաց Ս. Եկեղեցւոյս Հա-  
յաստանեայց՝ իբրեւ անարժան կոչ-

ման իւրում. և ընդ նմին հրաման ղըրկեց Աղեքսանդրապօլու Հայոց Հոգեւոր Կառավարութեան՝ որ զնա յատեան կոչէ, ու վեղարը, փիղներ եւ ուրիշ հոգեւորականի վերաբերեալ սքքեմը մերկայցնելով ՚ի նմանէ՝ յանձնէ Քաղաքական Տեսչութեան, որ զանի հարկատուաց կարգն անցնէ:

Բայց քանզի լուած է, թէ նոյն Տոնականեանցը նորէն Տաճկաստան փոխած է խաբել զպարզամիաս, ուստի ըստ հաճութեան Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց կարեւոր կը համարի Սինօգը տեղեկութիւն տալ Աղգ. Պատրիարքարանիս ՚ի պարտուպառչած տնօրէնութիւն:

Արգ Կ. Պօլսոյ Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովոյ որոշման ընդ համաձայն ներկայ Պաշտօնական Յայտարարութիւնս կը հրատարակուի յամենայն աղգային լրագիրս՝ Տաճկաստանի, որպէս զի Գեր. Առաջնորդք Գաւառաց, Տեղապահ, Փոխանորդք, Վանահայրք և Քահանայք գիտնալով՝ թէ նոյն Տոնականեանցը զըկուած է այսուհետեւ ՚ի հոգեւոր կոչմանէն և չէ նա հոգեւոր պաշտօնեայ Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց, չընդունին զնա երբէք քահանայ կամ վարդապետ, և ուր որ հանգիսի նա՝ ամենեւին չը թոյլատրեն նմա մերձենալ յոր և է հոգեւոր պաշտօն:

22 Ապրիլ 1876

Կնիս Աղգային  
Պատրիարքարանի:

Սոյն պաշտօնական Յայտարարութիւնն հրատարակելով՝ պատշաճ կը համարինք յարակիցել նաեւ Մեղր. Հայաստանի լրագրի հետեւեալ խորհրդածութիւնն, որ քանի մի կէտերու բացառութեամբ, արժանի է ուշադրութեան:

Այլոյցս Արարատեան լրագրի մէջ կարդում ենք Հնդկաստանից թղթակցութիւն, որով հաղորդվում է, թէ Յակոբ Սինի կարգաւցած վարդապետն, որ երբէմն Թիֆլիսում չըլում էր աշխարհական զգեստներով եւ դաշնոր կապած, երեւել է Կաթիլթայում վարդապետական զգեստով եւ վեղարով իբրեւ հայ վարդապետ: Նա տուել է Անգղիայի Թագաժառանգին գանգատանաց թուղթ սուրբ Էմիլիանայ Կաթիլթայի և այլ Հայ պատրիարքների գէմ, թէ իրան հալածում են Աւետարանական լինելու եւ քարոզչութեան պաշտօն տոնելու համար, ուստի եւ խնդրում է Նորին Բարձրութիւնից, որ բարեհաճի իւր ծախքով բանալու Հայաստանում մի դպրոց եւ իրան յանձնելու, որ նա կարող լինի իւր քարոզչութեան պաշտօնը կատարել Հայոց մէջ: Թագաժառանգ Իսխանը մերժել է նորա խնդիրը:

Վերջին ժամանակներումս այսպիսի կարգաւցած եկեղեցականներ մեր մէջ բաւական երեւեցան, որոնք յետոյ միտանելով ժողովրդեան մէջ, բացի սրան անօգուտ անգամ լինելից, վրդովում են սորա հանգստութիւնը, յայտնի բան է և աշխատում հոգեւոր իշխանութեան վարին կտրել ժողովրդոց աչքում: Եւ կամ այնպիսիք գիմում են օտար եկեղեցի և գտնում են այնտեղ ընդունելութիւն, ինչպէս արաւմուս Յակոբ վարդապետն Աքուլեցի, որ դառաւ Քաթիլթայի քահանայ և իբրեւ այսպիսի երեւեցաւ եւ Թիֆլիսում:

Միթէ հոգեւոր իշխանութիւնն աւելի լաւ վարված չէր լինիլ, եթէ այդպիսի եկեղեցականներին, փոխանակ աշխարհական զգեստ հագնել տալով թողնելու ժողովրդոց մէջ ՚ի գայթակ-

դու թիւն և ՚ի վնաս սոցա, ո զարկէր նրանց Սեւան կամ որ և իցէ վանք ապրող տարանայ համար կամ իբրեւ արտոր, հախապէս զսկելով նրանց իրաւունքից որ և է արքադան խորհուրդ կատարելու: Այս վնասիկ մէջ նորա գուցէ ուղղվէին և ապագայում պիտանացու լինէին կամ գէթ մնալով վանքերում աւելի զարգացած և աւելի դժուար գայթակղվող անձանց շրջանում անվնաս կը լինէին ժողովրդից:

Մեզ համար մինչեւ անգամ անհասկանալի է, թէ ինչ կը նշանակէ կարգընկեց կամ կարգալոյծ առնել, եթէ ոչ կարգաւորին լոկ արգելել արշտոն վարելու և եկեղեցու սուրբ Խորհուրդներն կատարելու: Զբոստենք, թէ մեր եկեղեցու սր կանոններն են ներում կարգաւորւածութիւնն այն ձեւով, ինչ ձեւով նա այժմ կատարվում է: Կարգը մեր եկեղեցին ընդունում է իրրե խորհուրդ անլուծանելի, վասն զի Հոգւոյն Սրբոյ շնորհքն անգառալի են:

Միթէ սրան ապացոյց չէ այն հանգամանքն, որ երբ մեր կարգալոյծ եկեղեցականը դիմում է մի այլ բրիտանիական եկեղեցու դռքը, սա ընդունում է նրան կարգաւոր և չէ կատարում նորա վերայ ձեռնադրութեան կարգը նորից:

Մտածենք և այս — այսօր մի Կաթողիկոս կամ Մինօքը մի վարդապետի կամ քահանայի կարգալոյծ արաւ եւ վաղը նորա յաջորդ Կաթողիկոսը ներեց նրան, միթէ այն կարգալոյծ եկեցականը նորից կ'ենթարկվի ձեռնադրութեան, բնաւ ոչ, եկեղեցին այդ չ'ընդունել, այլ այն կարգալոյծ անձն կը շարունակէ իւր պաշտօնը իբրեւ վարդապետ կամ քահանայ առանց կրկին ձեռնադրութեան: Եթէ այսօրէս

է, սերեմն ինչ կը նշանակէ կարգաւորին աշխարհականացնելն — բայց եթէ այն, որ եկեղեցական իշխանութիւնը, կամե՛նալով իւր բեռը թեւ թեւացնել, ազատվելով անարժան եկեղեցականներից ծանրաբեռնէ ժողովուրդը, սրան անպիտան և բեռն եղող անգամներ աւելացնելով:

Մենք կարծում ենք, որ հոգեւոր իշխանութիւնն աւելի օգուտ տուած կը լինէր ժողովրդեան և ճառայութիւն արած եկեղեցուն, եթէ անորժան եկեղեցականներին զսպելով և սաստելով պահէր իւր իշխանութեան ներքոյ և աշխատ լինէր ապագայում այգպիսեաց երեւելուն արգելք լինելու:

Սորա համար հերթ էր, որ խրատութեամբ անէր ընտրութիւնն այն անձանց, որոնք պէտք է մանեն եկեղեցականաց դասը, Որոշէր թէ՛ նոյա գիտութեան չափն և թէ՛ նոյա բարոյականութեան վերայ ուշադրութիւն դարձնէր: Ապա թէ ոչ այգպէս մի քանիսին կարգալոյծ անելով և աշխարհականացնելով չարեաց առաջն առնել անհնարին է, երբ միւս կողմից մէկի փոխարէն ամեն տարի տասներով աւելանում է անարժան եկեղեցականաց թիւը, վասն զի մեր մէջ մանաւանդ Տաճկաստանում և Պարսկաստանում, ամեն մինչեւ անգամ շատ ստոր արհեստով պարսպող անձինք կարողանում են կարգաւոր դառնալ եւ դառնում են, երբ ամեն դործերում անյաջող են գտնվում:

Մեզ պատահել է տեսնել մանաւանդ եկաւոր քահանաներ և մինչեւ անգամ վարդապետներ, որոնք Հայերէն վարժ կարգալ եւ կարգին դրել չեն գիտացել, ուր մնայ կարգացածն հասկանալ: Եթէ կարգաւորն կարգացած սուրբ Գիրքն անկարող է հասկանալ, նա ինչ սխալ քարոզէ ժող-

վերջեան կամ ինքն Աստուծոյ ո՞ր պա-  
տուիրանները պիտի կատարէ , երբ  
նրանց չը գիտէ :

Ուշագրութեան արժանի է այս  
հարցը . վասնզի ներկայումս ոչ ոք Հա-  
յերից կորող է ուրանալ , որ մեզ ա-  
մենից կարեւոր են ընտիր և պարտա-  
ճանաչ եկեղեցականներ , երբ ժողո-  
վուրդն օր աւուր նոցա պակասու-  
թեամբ բարոյապէս ընկնելու վերայ է :



## ՈՏՆԱԼՈՒԱՅԻ ՀԱՆԴԵՍ

Աւստրիական լրագրերը հազոր-  
դում են ոտնալուսյի հանգիսի հետե-  
ւեալ մանրամասնութիւնքն , որ եղել  
է Վեննայի արքունիքում : Նորին մե-  
ծութիւնք Կայսրն և Կայսերուհին կա-  
տարեցին ոտնալուսյի հանգէսն արշե-  
ղութերի , գէներալների և պալատա-  
կանների ներկայութեամբ : Հանգիստ  
կատարական դահլիճի մուտքի աջ և  
ձախ կողմում դրած էին 2 սեղաններ ,  
իւրաքանչիւրն 12 անձանց համար :  
Սեղանները զարդարած էին ծաղիկնե-  
րով և իւրաքանչիւր բազմականի հա-  
մար դրած էր ծաղկակալի վերայ մի  
ծաղկեայ փունջ : Տասն և կէս ժամին  
ներս բերին դահլիճը 12 ճերուռի եւ  
12 պառաւ կին շքապատած իւրեանց  
ազգականներով , որ նշանակած էին  
ոտնալուսյի հանգիսի համար : Կայս-  
րն ինքը սպասաւորութիւն էր անում  
կերակուր տալով 12 ճերերից իւրա-  
քանչիւրին : Նոյնն անում էր և Կայ-

սերուհին , միայն այն ղանադանու-  
թեամբ , որ նա անձամբ կերակուրը  
տալիս էր 12 պառաւներից միայն ա-  
մենահասակաւորին . իւրաքանչիւր կե-  
րակուրը վերջանալիս արշիդքսերն ա-  
մանները վերցնում էին և տալիս ծա-  
ռաներին : Ճաշը վերջանալուց յետոյ  
սեղանները ժողովեցին և սկսաւ նոյն  
խակ ոտնալուսյի հանգէսը : Պալատա-  
կան քահանան սկսաւ կարգալ Աւե-  
տարանն , որի ժամանակ Կայսրը ծուռնկ  
էր չոքում իւրաքանչիւր ճերունու ա-  
ռաջեւ , ոտները լուանում էր և ղեն-  
ջակով սրբում : Կայսերուհին նոյն հան-  
գէսը կատարում էր 12 պառաւների  
վերաբերութեամբ : Յետոյ Կայսրն և  
Կայսերուհին իւրաքանչիւր ճերունու  
և պառաւի վրից կախ արին մի մի փոք-  
րիկ քսակ սպիտակ կաշուից , որոնց իւ-  
րաքանչիւրի մէջ դրած էր 30 արծա-  
թեայ դրամ և դորանով հանգէսը վեր-  
ջացաւ :

Մէլո՝ Հայաստանի :



Ուրախութեամբ սրտի կը հրատա-  
րակենք Փ Ո Ր Ձ հանգիսի հետեւեալ  
Յայտարարութիւնն եւ համակրելով  
իւր սիրուն և շահաւէտ նպատակին՝  
կը մաղթենք յաջողութիւն և յարա-  
տեւութիւն :

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ՓՈՐՁ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

### ԵՌԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ

Յառաջիկայ Յուլիսի մէկից մեր խմբագրութեամբ կը հրատարակուի ՓՈՐՁ անունով ազգային եւ գրական նախն եռամսեայ հանդէս:

Արդեօք հարկաւոր է ապացուցանել ամսագրերի կարեւորութիւնը Հայոց ներկայ կեանքի զարգացման համար: Թողովրդի ընթերցասիրութեան պահանջը, նորա մտաւոր պիտոյքները օր ըստ օրէ աճում են: Հիւսիսափայլից եւ Կռունկից յետոյ մեր գրականութեան մէջ չերեւեցան այլ ևս այն պիսի օրագրեր, որ կարողանային կրթիչ նիւթերով բաւականութիւն տալ այդ պիտոյքներին. իսկ մեր լրագրերը, որ պէս շաքաթական թերթեր, պատկանում են օրական մամուլին, օրինակի համար նոքա անկարող են իւրեանց պարունակութեամբ կեանքի և մտքի հարցերին վճիռ տալ. նոքա կարող են միայն հարցեր զարթեցնել, մտածելու առիթ տալ և այլն: Խնդիրը (ուրեմն օրագրի կարեւորութիւնը պարզելը չէ, այլ թէ կարող ենք արդեօք մենք մեր ձեռնարկած օրագրով Ժողովրդի ընթերցասիրութեան քաղցը յագեցնել, նորա մտաւոր պահանջին բաւականութիւն տալ թէ ոչ:

Մենք համոզուած ենք, որ այդ պահանջին կիսով չափ անգամ բաւականութիւն տալը մեր զօրութիւնից բարձր է — դորա համար հարկաւոր են տաղանտ, մեծ միջոցներ և շատ փորձաւորութիւն. մենք կարող ենք կատա-

րել միայն այն, ինչ որ կարող է կատարել և ամեն ոք, որ տէր է որոշ համոզմունքների եւ ունի հաստատ կամք: Ուրեմն մեր ձեռնարկած գործը կարող է միայն մի փոքր լինել ազգի լուսաւորութեան գործին ծառայելու:

Սորան կից նախագիծը ցոյց է տալիս, թէ ինչ նիւթեր կը պարունակէ իւր մէջ «Փորձը»:

Մեր օրագրի ուղղութեան, նորա ոգու նկատմամբ, պարտք են համարում երկու խօսք ասել:

Ա. Ազգութեան հարցի նկատմամբ՝ ազգութիւնների ինքնուրոյն մտաւոր զարգացման, նոյա ինքնուրոյն բարոյական կեանք ունենալու իրաւունքը մենք ոչ միայն սրտով ենք ըմբռնում, այլ համարձակում ենք կարծել որ գիտութեան վերայ հիմնած համոզմունք ունինք: Եւ մեր ազգի պատմութեան ու ներկայ վիճակի մէջ մենք տեսնում ենք այն բոլոր երեւոյթները, որոնք Հայոց ազգի այդ ինքնուրոյնութեանն աւելի իրաւունք են տալիս, քան ուրիշ շատ ազգերի:

Բ. Մենք Հայաստանեայց, ազատութեան սկզբունքների վերայ հիմնած, Սուրբ Եկեղեցւոյ հարազատ որդի ենք: Այն փաստը, թէ այժման հոգեւորականութիւնը չի համապատասխանում իւր կոչմանը, չի կարող թուլացնել մեր մէջ այդ սկզբունքների վսեմութեան համոզմունքը. այլ պէտք է թելադրէ մեզ ամեն աղնիւ

միջոցներով օգնել հոգեւորականութեանը բարձրանալ իւր ստոր աստիճանից :

Գ. Մեր ազգի քաղաքակրթութեան աստիճանի աննախանձելի դրութեան խելամուտ լինելով, մենք համոզուած ենք, որ քաղաքակրթութեան նախագաղափարները (իդէալները) արեւմտեան Եւրոպայումպէտք է որոնել, ուր և առատութեամբ կը գտնենք մեզ օգնելու բոլոր հնարները :

Մենք բաւական համարեցինք այս երեք կէտք, այն եւս համառօտակի, միայն յիշել. փորձը ցոյց կը տայ, թէ մեր օրագիրը որ չափով կարող է այս համոզմունքների արտայայտութիւն հասնարուիլ :

Ո՞վքեր են մեր աշխատակիցները. Եւրոպական կրթութիւն ստացողների թիւը օրէցօր աւելանում է : Նույն առաջին պարտաւորութիւնն է, «Արեւմուտքի ոսկեդոյն ճառագայթները ցրւացնել հին Արեւելքի վերայ, որ ամեն լուսոյ աղբիւր է եղած» : Դոցա՞համար ահա միշտ բաց կը լինին «Փորձի» էջերը, դոքա կը լինին մեր աշխատակիցները :

Բայց ահա և մի քանի անուններ— Բարխուդարեանց Գէորգ, Գեղամեանց Յովակիմ, Երիցեանց Աղէքսանդր, Երիցեանց Տ. Սրբուհի, Թամազեանց Միքայէլ, Ղաւբարեանց Պաւղոս, Ղուկասեանց Հայրապետ, Մանգինեանց Սեդրակ, Մէլք— Յակովբեանց Յակոբ, Յովհաննիսեան Օրիորդ Գալիանէ, Նազարեանց Յովհաննէս, Նահապետեանց Արշակ, Զմէլկեանց Գէորգ, Պալասանեան Ստեփաննոս, Պատկանեանց Ռափայէլ Գիշմիշեանց Աղէքսանդր :

Քանի մի անձանց անուններն այժմ չենք տպագրում, ըստ որում դեռ եւս խօսք չունինք առած նոցանից, թէ եւ

համոզուած ենք, որ պատիւ կ'ունենանք նոցա գրուածներով զարդարել մեր «Փորձի» էջերը :

Այժմ մի քանի խօսք արտաքին պայմանների մասին :

«Փորձը» լոյս կը տեսնի երեք ամիսը մի անգամ մեծ գրքերով, որոց իւրաքանչիւրը բաղկացած կը լինի քսանից մինչեւ երեսուն տպագրական թերթից (թերթը կունենայ 16 երես Հիւսիսամիայի երեսների չափով) :

Մեր բարեկամներից ոմանք ուրախանալով, որ վերջապէս ձեռքները մի հայկական հաստ օրագիր կը հասնի, մի եւ նոյն ժամանակ ասում են, թէ պէտք էր աւելի ստէպ հրատարակել, որպէս զի խմբագրի և իւր ընթերցողների մէջ աւելի սերտ կապ լինէր, թէ երեք ամիսը մի անգամ լոյս տեսնող օրագիրը հազիւ թէ կարող է ցանկալի յաջողութիւն ունենալ և այլն :

Մեր բարեկամների կարծիքը գուցէ եւ ճշմարիտ լինի, բայց մենք աւելի խոհեմութիւն ենք համարում նախ այն անել, ինչ որ կարելի է եւ ապա այն, ինչ որ ցանկալի է : Առ այժմ երեք ամիսը մի անգամ հրատարակելով աւելի զիւրութիւն ունինք փորձելու մեր նպատակը և հասարակութեան համակրութիւնը : Եթէ մեր առաջին տարւոյ փորձը յաջող ընթացք ստանայ, մենք այնուհետեւ պատրաստ ենք հետեւելու մեր բարեկամների բարի խորհրդին, ամիսը մի անգամ հրատարակելով «Փորձը», ինչպէս ամեն մի շաբաթական թերթ պատրաստ է օրը մի անգամ հրատարակուիլ, եթէ օգնեն նորան իւր բաժանորդները և աշխատակիցները :

Համոզուած լինելով որ յարատեւապէս միայն վարձատրուած աշխատանքն է կարող արդասաւոր և ընտիր լինել, մեր աշխատակիցներին նշանաւ

կած ենք 10-20 ուսուցիչ իւրաքանչիւր տպագրական թերթի համար: «Փորձի» յաջող ընթացքը կաւելացնէ և վարձատրութեան գինը:

Վերջին խօսք:

Մենք շատ բախտաւոր ենք համարում մեզ, որ մեզ յաջողեցաւ մեր բարեկամ պարոն Աղաբաբու Աղայեանը ցին իբրեւ խմբագրութեան մօտաւոր գործակից հրաւիրել: Պարոնը հսկելու է ոչ միայն «Փորձի» տպագրութեան մաքրութեանն և ուղղագրութեանը, այլ և միշտ աջակից է լինելու մեզ:

ԽՐԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ԾՐԱԳԻՐ ՓՈՐՁ ՀԱՆԴԻՍԻ

«Փորձը» կը հրատարակուի հետեւեալ Ծրագրի համեմատ բովանդակութեամբ:

Ա. ԳՐԱԿԱՆԱԿԱՆ.—Այս բաժնի մէջ կը մտնեն թէ ինքնուրոյն և թէ ստոր լեզուներէ թարգմանած բանասիրական աշխատութիւններ՝ կեանքից առնուած նկարագրութիւններ, վէպեր, ոսմաններ, դրամատիքական գրուածներ—թէ ընդարձակ եւ թէ ոտանաւոր:

Բ. ՊԱՏԾԱԿԱՆ.—Յօդուածներ Հայոց, Ռուսաց և ընդհանուր պատմութիւնից: Այս բաժնի մէջ կը մտնի նա և ժամանակակից քաղաքական կեանքի տեսութիւնը:

Գ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.—Դիւրըմբռնելի ոճով գրուած զանազան յօդուածներ գիտութեան այլ և այլ ճիւղերից առնուած:

Դ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.—Մանկավարժական հարցերի վերաբերեալ ընդհանուր յօդուածներ, դպրոցական

գործի այժմեան դրութիւնը թէ Հայոց մէջ և թէ Ռուսաստան եւ արտասահման:

Ե. ՔՆՆՈՒԹԻՒՆ և Մատենագրութիւն Հայոց, Ռուսաց և օտար լեզուներով լոյս տեսած նշանաւոր գրքերի:

Զ. ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Այս բաժնի մէջ կը տպագրուին այնպիսի յօդուածներ, որոնք մեր Ազգի ներկայ վիճակի քննութեանն և նկարագրութեանն են նուիրուած, այն է՝ Եկեղեցւոյ, Ուսումնարանաց, Եկեղեցականաց, Ուսուցչաց, Ազգային լուսաւորութեան, Ազգային տնտեսութեան եւ հասարակական կեանքի: Կը լինին թղթակցութիւնք ամեն Հայաբնակ տեղերից, Կարգադրութիւնք Տէրութեան և Հոգեւոր Վարչութեան:

Է. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տեսութիւն ներքին գործոց Ռուսաստանի ընդհանրապէս եւ Անդրկովկասի առանձնապէս: Այս բաժնի մէջ կը բռնվանդակին նաեւ թղթակցութիւնք և զանազան հաղորդագրութիւնք Ռուսաստանի և Կովկասի կեանքի մասին:

Ը. ԱՅԼ և ԱՅԼՔ.—Ամեն տեսակ լուրեր:

Թ. Յայտարարութիւնք տեղական և Եւրոպական լեզուներով:

Փորձի գրքի մասնադրագինը առնալիս  
գեղ ասալ մանկէ է:

Ստորագրուել կարելի է Տիֆլիսում մը Խմբագրի մօտ, Հ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութումը, և Զ. Գրիգորեանցի գրախանութումը: Օտար քաղաքացիք կարող են դիմել Խմբագրին հետեւեալ հասցեով— Tiflis. Bédaction du Journal Arménien „PHORDZ“:

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՅԵՂԵՍԻԱՅԷՆ

Քոլերայի և տենդի մահաբեր հիւ  
ւանդութեանց անցեալ տարի Նդե-  
սիոյ և չրճակայից մէջ գործած սոսկալի  
աղէտներն արդէն ստեն ատեն հրա-  
տարակուած լինելով լրագրաց ոմանց  
մէջ ցաւօք սրտի կարգացած և իմա-  
ցած էինք . սակայն մօտ օրերս Նդե-  
սիայէն նամակ մը ստանալով աւելի  
ցաւ և կսկիծ զգացինք տեղական հայ  
հասարակութեան կրած աղետից եւ  
տուած բազմաթիւ զոհերուն վերայ .  
զորս նամակագիրն այրած սրտիւ եւ  
դառն արտասուօք կը նկարագրէ : Մի  
կողմէն քոլերայն , միւս կողմէն տենդն  
ըստ հիւսնա փողոցէ 'ի փողոց եւ տնէ  
տուն արագ արագ ճարակելով սոս-  
կալի նախճիրներ կը գործեն . մի կող-  
մէն բժշկաց , նա մանաւանդ հմուտ և  
բարեբարոյ բժշկաց սովն , եւ միւս  
կողմէն գործող անյաջողութեան պատ-  
ճառաւ հասարակութեան կրած դը-  
րամական տագնապը . այս ամենուն  
հետ միացած լինելով նաեւ զօշաքաղ  
և անխիղճ ոմանց իբր բժշկաց կեղե-  
քումներն ու բարբարական ընթացքը  
վշտաց և աղետից վիհը կը գլորեն խեղճ  
և անտերունջ հայ հասարակութիւնը .  
այնպէս որ տուն չը կայ , կ'ըսէ նամա-  
կագիրն , ուր հիւանդ չը գտնուի .  
վայր չը կայ , ուրկից լալուց և ողբոց  
ձայներ չը լսուին . իսկ որ ամենէն ցա-  
ւագոյժն է , այնպիսի ընտանիքներ կը  
թուէ , որք մի կամ մի քանի աւուր  
մէջ 'ի հող տապանի հանգչած են բը-  
նակարաննին ամայի և թափուր թող-  
լով իսպառ . որ եթէ ստոյգ է՝ արդարեւ  
խիստ ցաւալի է : Այժմ թէեւ դադ-  
րած է , կ'ըսէ , այն սոսկալի կոտորածի  
սատկութիւնը , սակայն նորա ձգած  
հետոյ դառնութեան աղգեցութիւնը

դեռ կը կրէ խեղճ և տառապալիր ժո-  
ղովուրդն , որոյ մասին այսպէս կը գը-  
րէ նամակագիրն ճիշդ իւր բառերով  
“ Իրաւ է որ քոլերայ ըսուած անագո-  
րոյն աստը հեռացած է . բայց Նդե-  
սիային նորա դառնութեան բաժա-  
կէն քամած մրուրէն դեռ չէ սթա-  
փած , թողունք գործի անյաջողութիւ-  
նը որ հաւասարապէս տարածուած է  
երկրիս վերայ ” :

Արդարեւ ցաւալի և դառն են այս  
տեսակ լուրերն ամեն հայ սրտերու .  
նա մանաւանդ աւելի դառն և կսկծա-  
լի անոնց համար՝ որք ականատես եւ  
ենթակայ իսկ գտնուած են այս ամեն  
աղետից . ուստի մենք եւս ցաւակցե-  
լով պարոն նամակագրի եւ բոլոր հայ  
հասարակութեան կրած այն ամեն վըշ-  
տաց և տառապանաց , Հոգւոյն Սրբոյ  
մխիթարութիւնը և քաղցր սփոփանքը  
կը հայցեմք առ հասարակ ամենուն հա-  
մար :

Պարոն նամակագիրն այս ամեն չա-  
րեաց վրայ ցաւ 'ի սիրտ ողբալէն ղկնի  
մխիթարար լուր մը եւս կը հաղորդէ .  
տեղւոյն արքունի դօրաց բժիշկ Գեր-  
մանացի Ժօզէֆ անուն Մեծ . Տօթթու-  
րի հմտութեան , բարեսրտութեան և  
մարգասիրութեան մասին գովեստիւք  
խօսելով . որոյ թէ քրիստոնեայ և թէ  
թիւրք ժողովրդեան անխտիր ցոյց տը-  
ւած մարգասիրական խնամքն ու հռ-  
գատարութիւնը ղկնքը սիրելի ըրած  
են , կ'ըսէ , ամեն կարգի և աստիճանի  
ժողովրդոց . այնպէս որ գրեթէ տասն  
ամսոյ չափ առաջ երբ յիշեալն տէրու-  
թեան հրամանաւ արքունի դօրաց հետ  
Բերիա կ'երթայ բոլոր քաղաքացիները  
մեծ տրամութեան մէջ թողլով , տեղ-  
ւոյն Կուսակալն և աղգաց առաջնորդք  
բոլոր քաղաքացւոց կողմէն հեռագ-  
րաւ կը խնդրեն Բ . Գոնէն նորա վե-  
րադարձը , որոց խնդիրը լսելի լինելով

Մեծ . Տօբթօրն տասը ամէն զինի կրկին կը դառնայ յԵդեսիայ յուրախութիւն և ՚ի սփոփանս բոլոր հասարակութեան :

Պարոն նամակագիրն կը յաւելուեալ թէ, եթէ Պարոն Տօբթօրն վերստին յիշեալ հիւանդութեանց ժամանակ յԵդեսիայ գտնուէր անշուշտ աղքատն այնքան չը պիտի տառապէր եւ կ'եղբքուէր, որոյ մասին տեղւոյն պատրիարքական փոխանորդ Արժ . Կարապետ Վարդապետն եւս վկայելով իւր ինքնագիր ստորագրութեամբ՝ կը խընդրեն հրատարակել ՍԻՅՆ ամսաթերթի մէջ այն վկայութիւնքը ՚ի շնորհակալութիւն և յերախտագիտութիւն նորին տնչահասէր և մարդասիրական բարեգործութեանց :

Ս . Գ . Ե .

### ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱՐԱՐ

ԻՍՁԻ ՃԱՌ ԵՒ ԿՈՐՈՒՍԵԼՈՅ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ

Սոյն վերնագրով, Խրիմեան Հայրիկի աշխատասիրութեամբ և Կիւմիւշէ կերտանեան Մեծ . Ռուբէն Էֆէնտի ի բարեպաշտական սատարութեամբ փոքրիկ մատեան մի հրատարակուած է, որ ընթերցող Քրիստոնէի սիրտն կը վառէ երկնաւոր սիրով, Յիսուսի սիրով, խաչի սիրով, արդարութեան սիրով, ճշմարտութեան սիրով, եղբայրութեան սիրով : Սոյն երկասիրութիւնն ո՛չ ցամաք վարդապետական է և ո՛չ մեկնողական, այլ յորդորական, այլ ներբողական, յորում ղմայլմամբ և խանդաղատանօք կը հռչակուի Յիսուսի Քրիստոսի անհուն մարդասիրութեան,

թիւնն, աստուածային սիրոյ անխնանալի զոհն, Խաչի անճառելի ճառն ու իմաստութիւնն, որ յիմարութիւն է կորուսելոց :

Սոյն երկասիրութեան վերայ համառօտ գաղափար տալու համար՝ արժան կը համարիմք յառաջաբանն հրատարակել Սիօնի միջոցաւ, յորդորելով մեր ընթերցողներն, որ աշխատին նոյն խի երկասիրութիւնն ձեռք բերել կարգալ և քրիստոնէական սիրով ընանիլ :

### ՅՈՐԴՈՐ

ԱՌ . ԻՄ ՊԱՇՏՈՆԱԿԻՅ ԵՂԲԱՐՍ

ԵՒ ԻՍՁԱԿԻՐ ՌԻՅՏՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

ՅԻՍՈՒՍԻ Խաչին ճառը Ձեզ համար գրեցի եւ Ձեզ կը նուիրեմ, ո՛վ Խաչին զինուորներ, Աւետարանի պաշտօնեայնք, կենաց բան քարոզողներ եւ Քրիստոսի հօտին հովիւներ, դուք եթէ սիրով կը գրկէք Յիսուսի Խաչը և ախորժանօք կրնձեռնուք իմ Խաչին ճառը . մն ուրեմն, հոգւով հետ ինձ եկէք, երթանք երկնք Սիօնի վերնատուն . ուր Աւետարանին ուսուցիչ երկնից Վարդապետն կը խոնարհի մինչեւ աշակերտաց ոտքը, կենդանի եւ գործնական օրինակ կ'աւանդէ մեզ և կ'ասէ . « Օրինակ մի ետու ձեզ : զի և դուք զնոյն առնիջիք » :

Ո՛հ, քանի՜ մեղապարտ եմք այս օրինակին առաջ երբ կը բարձրամտիմք, երբ փառասիրութեան ախտով կախ տանամք, թողումք Յիսուսին չափ խոնարհիլ և ընկերին ոտքը լուանալ մեք զմեր ընկեր կ'ոտնհարեմք և կը ջանամք տիրելով ստրկացուցանել Աւետարանի ազատ պաշտօնեայնքը :

Մտիկ արէք, ո՛վ դուք, սէր քարոզող վարդապետներ, Սէրն զսէր կաւանդէ, երկնախօս վարժապետ սիրոյ

դասեր կուսուցանէ . և քանի՞ խնամով  
կը կրկնէ . « Այս է պատուէրն իմ՝ զի  
սիրեալիք զմիմեանս » :

Աւաղ մեզ , ուշամուսաց եղանք ,  
հաղար ութ հարիւր տարի է այս դա-  
սերն Աւետարանը մեզ կաւանդէ . և  
մէք կը կարդամք ժողովուրդին . տա-  
կաւին ոչ մէք սորվեցանք՝ ոչ ժողովուրդ  
հասկցաւ . սիրոյ դասը թողինք՝ յա-  
տելութիւն կը թեցինք զմեզ , սիրոյ կը  
տակը տուինք՝ բանասարկութիւն նախանձն  
առինք , սէրը կորուսինք՝ եւ գրգռիչ  
թշնամութիւնը գտանք : Այլ եւս ՚ի  
մէնջ ո՞վ կը համարձակի սէր քարոզել  
ժողովուրդին . երբ սիրոյ ճառախօս  
վարդապետներս՝ սիրել չը գիտեմք ,  
հետ միմեանց ատելութեամբ կը վա-  
րիմք . և ի՞նչ մնաց , որ Խաչն ու Ա-  
ւետարանը մեր գրկէն թողումք , եւ  
սուր առնելով՝ միմեանց կողը մխեմք :

Միտ դրէք , Յիսուս խաղաղութիւն  
կուտայ , որ արդէն երանի տուած էր  
խաղաղարար ոգիներուն , մէք եւս ե-  
կեղեցւոյ բեմէն , պատարագի սեղա-  
նէն այդ խաղաղութիւնն յաճախ կու-  
տամք ժողովուրդին՝ աջով եւ խաչով  
տեսաւնագրելով հանգերձ : Այլ ի՞նչ է  
սպա , որ մեր խաղաղութեան ողջոյն՝  
խռովութիւն կը դառնայ : Քորս սրտ-  
ճառն ո՞վ չգիտեր , զի խաղաղութեան  
պաշտօնեայներն իրարու դէմ խռոված  
են , մէթէ կարելի է , որ խռովեալ ո-  
գիները՝ խռովելոց խաղաղարար լինին :  
Եւ մէք ինչո՞ւ համար կը խռովիմք ,  
այդ եւս՝ ինքնին յայտնի է . կը խռու-  
վիմք փառասիրութեան համար , պաշ-  
տօնասիրութեան համար , կը խռովիմք  
Մովսիսի աթոռ նստելու եւ նախա-  
թոռ լինելու համար , կը խռովիմք Քը-  
րիստոսի ազատ եկեղեցին տիրապետե-  
լու համար . Աւետարանի և Եկեղեց-  
ւոյ խոնարհ ոգին չը ճանչնալով՝ այն-  
պէս կը կարծեմք , որ մէք եւս այս աշ-

խարհիս Թաղն ու գաւազան ունիմք ,  
պաշտօն և պաշտիլ կը պահանջեմք , չը  
յիշելով մեր հեզ վարդապետին խօս-  
քը . « Որդի մարդոյ եկն ոչ պաշտօն  
առնուլ , այլ պաշտել եւ տալ զանձն  
փոխանակ բազմաց » :

Երանի՛ թէ մէք միայն զմեզ խոռ-  
վէինք և ժողովուրդն անխռով մնար .  
ո՞չ մէք կը խռովիմք և շատ անգամ՝  
եւս անարգ միջոյներն ՚ի գործ դնե-  
լով կը խռովեցուցանեմք , և մերթ ևս  
քանի՞ ամօթ մեզ , երբ ժողովուրդը՝  
խաղաղարար կը լինի մեր մէջ , Աւե-  
տարանը մեր ձեռքէն առնելով՝ մեր  
պաշտօնն ՚ի դերերեւ կը հանէ :

Հապա , պաշտօնակից եղբարք իմ ,  
սիրե՛ք , որ խաղաղ մնամք , առնումք  
մէք նախ Քրիստոսի սէրն ու խաղա-  
ղութիւնն , եւ սպա ժողովուրդին  
տամք :

Միօնի վերնատունէն իջնամբ Գեթ-  
սեմանի ձորը . տեսէք Աստուածորդ-  
ւոյն սազնապին ժամ . տեսէք թէ  
ի՞նչպէս քիրան ՚ի յարիւն կ'աղօթէ .  
ամենայոժար ոգւով կ'ընդունի մահ-  
ուան դառնալի բաժակն , եւ կը խմէ  
զայն մեղապարտ մարդոյն փրկութեան  
համար : Եւ մէք , որ Յիսուսի հետե-  
ւող խաչակիրներ եմք՝ արդեօք այս  
բաժակէն մեզ բաժին չի կա՞յ : Այո՛ ,  
ամեն խաչակիր պաշտօնեայն՝ իւր բա-  
ժին ունի , մէք եւս գէթ մի մի կա-  
թիլ խմեմք մեր ժողովուրդին փրկու-  
թեան համար :

Եւէք աստի , երթանք հետ Քրիս-  
տոսին դտտաւորաց ատեանը , տեսէք  
քանի՞ հեզ է մեր վարդապետ . դա-  
տաւորներ կ'որոտան , կայծակներ կը  
թափեն , նա անխռով կեցած է . փսն  
զի անմեղն միշտ անխռով է . ժպիւրհ  
ծառայն ապտակ մի կը հանէ ահաւոր  
և լոյս երեսին , ընդ որ Մովսէս ծառայն  
միայն քարի ծերպէն կը դիտէր : Հեղու-

Թիւն չի ցամանոր , այլ մեղմով կը պատասխանէ . եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայէ վասն չարին . իսկ թէ բարինդէր հարկանես զիս : Իսկ մեք ոչ եւ թէ ապտակ , այլ միայն մի սոսկ բան լսելով անհնարին կը ցամանումք և կը զայրանամք , և մերթ եւս պատուախնդիր լինելով՝ մեր ոստիւր կը վարեմք յատենէ յատեան , որոյ օրինագիրքն Աւետարանն է :

Ո՛վ խաչակիր զինուորք , առէք իւրաքանչիւր Ձեր խաչերը հետ Քրիստոսին երթանք ՚ի Գողգոթա : Ո՛հ , մեր խաչերը շատ թեթեւ է և մեք յետս կը կասիմք . Յիսուս գնաց հառաւ Բեթելայ սարին գլուխ և մեք կէս ճամբուն վերայ մնացինք : Սիմոն Կիւրենացւոյն պէս միայն պահ մի կրեցինք խաչը մեր ուխտին օրը , և դարձեալ զամէն խաչերը դրինք Յիսուսին յուս և մեք յետս դարձանք գնացինք աչխարհին մաճ բռնել . թողինք միանգամայն յետ խաչին՝ նաև կենաց բան և Աւետարանը :

Առէք ձեր խաչեր , մի փախէք , առէք , ո՛վ խաչաբարձ ուխտ , եթէ կը պարծիմք որ մեք Քրիստոսի զինուորեալ Նիկեացւոյն յառաջամարտ ունահատակ զինուորիկներն եմք . առէք բարձրացուցէք խաչին դրօշ՝ երթամք ժողովուրդին յառաջ : Ես գիտեմ տրուունջ ունիք և յառաջ կը բերէք Պօղոսին բան . “ Ո՞րք զինուորիցի իւրով թոշակաւ ” : Այլ մեր զօրագլուխ Յիսուսը զինուորեցաւ , իւր թոշակը՝ միայն Աւետարանն էր եւ Տիբերիական ծովուն ձրիատուր ձկներն : Պօղոսն ևս նոյն օրինակ զինուորեցաւ . նա արուեստիւ վրանակար էր , եւ պարծենալով կ'ասէր , ես ձեռարուեստովս պաշտեցի իմ առաքելակից ընկերներս : Թէ ամօթ է վրան կարել , ուրեմն թուղթ գրենք , գիրք շինենք , ուսման պարա-

պինք և մեր թոշակով զինուորիմք :

Յիսուս խաչով ելաւ Գողգոթային գլուխ . մեք առանց խաչի ու վտի երթամք ինչպէս դասալէք աշակերտներն , երթանք գտնէ միայն աչքով հանդիսատես լինիմք . զի մեր փրկուածեան զոհարան է հոն : Տեսէք որչափ անմեռնչ է , ի՞նչպէս որոջն իւր կը տրջին առաջ՝ իւր փրկող բազուկները՝ փայտին վերայ ինքնայոժար կը տաւածէ , և կ'ասէ , Բարձրացուցէք զիս , որ զաշխարհ բովանդակ առ իս ձգեմ :

Այսպէս ահա ՚ի մարդ կերպարաւ նեալ Սէրն Աստուծոյ՝ իւր անհուն և մեծ սիրով զանձն իւր հաւատացեալ քարեկամներուն վերայ կը դնէ , և կը մեռնի խաչին վերայ և ՚ի մեզս մեռելոյ՝ կեանք կուտայ :

Յիսուս իւր խաչով և սիրով հաւացեալ մարդիկներն առ ինքն կը ժողովէ և մեք առանց սիրոյ և խաչի կը ցրուեմք զայն , և մեզ համար խօսեցաւ նա կանխաւ . թէ “ Որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ ” : Ո՛վ կարող է առանց խաչի և սիրոյ Յիսուսի հետ ժողովել . զի նորա ժողովելու հեծանոյն խաչն էր միայն , ինչպէս ասաց և վերկայեց իւր Մկրտիչն :

Արդ եթէ այնպէս կը հաւատամք ինչպէս կը բարձրախօսէ Պօղոսն , թէ խաչին ճառը՝ կորուսեալ անհաւատից համար յիմարութիւն է . այլ մեզ համար , որ հաւատով փրկուած եմք՝ Աստուծոյ զօրութիւնն է :

Զօրանամք ուրեմն խաչի ճառի զօրութեամբ եւ զօրացուցանեմք տիարամիաններն , որոց դէմ սոյժմ ՚ի կախ ելած են աշխարհ , մամօնայն և նիւթադաշտ փիլիսոփայութիւն : Մէք Պօղոսին պէս մեր խաչով պարծինք , որով աշխարհ մեզ համար ՚ի խաչ ելած է և մեք աշխարհին , և երանի՛ թէ տիրապէս այսպէս լինէր և կարենայինք պարծել :

Խաչակրաց խմբին բանին դէմ առ ձեզ կը դարձնեմ և կ'աւարտեմ յոր դուրս, ո՛վ հաւատալէ ալ ժողովուրդ, դուք որ Խաչին կը հաւատայք և աշխարհի խաչակրութեան մէջ կը տառապիք, այնպէս մի կարծէք թէ խաչին պարտիքը՝ միայն կղերական դասուն բեռն է, և ժողովուրդն ազատ է։ Ո՛չ, ո՛չ, խաչն՝ Քրիստոնեայ անուն կրողաց ու զինուորաց առ հասարակ անխուսափելի և նուիրական պարտքն է։ Դուք եւս ձեր խաչերն ունիք, զոր աշխարհիս բռնութիւնն միշտ կը սպառնաստէ ձեզ համար. և դուք կարող չէք ձեր թիկանց վերայէն խաչին բեռնն խողաւ թօթափել, զի Քրիստոս ասաց. «Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք»։ Թեպէտ աշխարհիս քաղաքակրթութիւնն զօրհանապաղ կը տքնի և կը ծգնի խաչն բառնալ ձեր թիկունքէն, որուն տակ կը հեծէք աշխարհում։

Սակայն ո՛վ կը հաւատայ, որ վերջուն բռնութիւններ եւ խաչն աշխարհէս բարձուի, ժողովուրդն ազատ ու երջանիկ ապրի. հաւատարութիւն տիրէ, աղքատին խրճիթն՝ հարուստին ապարանից բարձրութեան հետ հաւասարի, փողոցի աղքատ Ղազարոս՝ բեհեզ ու ծիրանի հագնի եւ մեծատան հետ սեղանակից նստի։

Ձեմք ժխտեր սակայն եթէ ճշմարիտ քաղաքակրթութիւնն Աւետարանի ընկերակրութեան և ոկզանց վերայ յառաջ կը վարէ իւր մեծամեծ ձեռնարկութիւնները, ժողովուրդին խաչն միայն կը թեթեւնայ, բայց ոչ խապառ կը բարձուի։

Առէք ուրեմն, ո՛վ ժողովուրդ Հայոց, առէք ձեր խաչեր, կարգացէք Խաչին ճառը, սիրով ու հաւատով տարէք ձեր ծանրակիր խաչեր, խաչով ելէք Գողգոթային գլուխ, խաչով մտէք ՚ի գերեզման, խաչով ելէք Երկինս առ

ԺԱ

Յիսուս, որ կը կոչէ առ ինքն իւր ամէն կտրիճ խաչակիրներն. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ»։

## ՀԱՄԱՌՕՏ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄԱՌԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱՅ ՀԱՄԱՐ

Մեծ. Պ. Մ. Մամուրեան, որ Հայկական արդեան Գրականութեան գործունի մշակներէն ամենէն անխնայն է և արդիւնաշատն, Ընդհանուր Պատմութեան Դասագիրք մի կ'ընծայէ Հայ Դպրոցներուն, որ իւր ամփոփ պարունակութեամբ, պատմական ուսանելեաց հասուն ընտրութեամբ ու պատշաճ դասաւորութեամբ մեծ աւաւելութիւններ ունի ցարդ հրատարակուած նմանօրինակ Դասագրքերէն։ Առ այժմ սոյն կարի պիտանի երկաթիւրութեան Ա. Հատորը Ա. Մասն միայն հրատարակուած է, որ կը պարունակէ Արեւելքի հին ժողովուրդաց պատմութիւնն, մի գեղեցիկ ներածութեամբ հանդերձ։

Որչափ փափաքելի էր, եթէ Պատմութեան այսպիսի մի ընտիր Դասագիրք ունենար նաեւ իւր պատմական Ատլասն, այն է պատմական — աշխարհագրական տախտակներն, որք պատմական ուսումն զգալի կերպիւ կը դիւրացնեն ուսանողաց համար, պատկերայնելով նոցա առջեւ պատմական մեծ անցից և շրջանաց հորովման, փոփոխման և յաջորդութեան գլխաւոր հետքերն, որոնք դարուց ՚ի դարս դրոշմուել են երկրագնդի վերայ։ Բայց ո՛վ կարող

է այսպիսի մի զոհողութիւն պահանջել Մեծ . Երկարասիրողէն , քանի որ ամեն ոք դիտէ՝ թէ ո՞րչափ մեծ ծախուց կը կարօտի սոյնպիսի մի պատմական\_տղխարհագրական Ատլասի պատրաստութիւնն և տպագրութիւնն :

Մեր մեր սոյն փափաքանաց լրումն ապագային թողով և ներկայ պատմական Դասագրքի հրատարակութիւնն մեր Ազգային Դպրոցներուն աւետելով՝ արժան կը համարիմք Դասագրքի յառաջաքանն հրատարակել՝ ընթերցողաց փոքրիկ գաղափար մի տալու համար :

### Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Պատմութեան ուսումն առհասարակ մեր դպրոցներու մէջ խիստ երկրորդական , կամ չնչին տեղ մը կը բռնէ . իսկ ուսուցման եղանակը բոլորովին անհեթեթ է : Այս վիճակին պատճառները բազմադիմի են : Ստէպ՝ ժողովուրդը կը կարծէ թէ պատմութիւնը շահաւէտ , ապրուստ հայթայթող միջոց մը չէ , այլ զուարճալի էփեայէ , զոր ամեն մարդ կարգալով կրնայ ուսնիլ եթէ միայն կամք ունենայ , ինչպէս կ'որովին առասպելներ : Ուստի ոչ պատմութեան յատուկ դասատու պէտք է եւ ոչ դասագիրք , իսկ եթէ հնար է՝ ուսմանց ծրագրէն իսկ սրբելու է այս ապագրիւնն առարկան :

Այս դատողութիւնը՝ թէեւ ինքնին թիւր՝ կերպով մը կ'արդարանայ երբեմնատենք այն եղանակն՝ որով պատմութիւնը կ'աւանդուի տղայոց , չոր ու ցամաք եղանակ՝ որ սովորաբար լոկ անուսներ , թուականներ , աննշան պարագաներ կամ կիսկոտուր ու կրճատ իրողութիւններ ուսնելու մէջ կը կոյանայ : Հետեւեալէս՝ եթէ մեր անգիտ

դատողը մի անգամ մեղադրելի է , գիտան դասատուն տասն անգամ , այս ուսումն օգտակար , ախորժելի և դիւրամբռնելի ոճով չաւանդելուն պատճառաւ :

Այս թերութիւնը լեցնելու համար՝ ոչ միայն՝ ինչպէս լեզուի և ուրիշ գիտութեանց , նոյնպէս պատմութեան նկատմամբ պէտք են յատուկ դասատուներ որ ուսմանց այս , լոկ այս ճիւղին մէջ վարժ գտնուին , զայն իրենց արուեստն ընեն , միշտ անով պարուպին , այլ և ընտիր դասագրքեր՝ ամէն կարգի և աստիճանի աշակերտաց համար : Այս կրկնակի պէտքն արդէն շատերուն զգալի եղած է : Թողով առաջինը ժամանակին , միւսը հոգալն անհրաժեշտ է : Վարժարանաց համար այլ և այլ դասագրքեր կը հրատարակուին , սակայն տակաւին պատմութեան վերաբերալ գիրքեր չատ հաղուագիւտ են : Իրաւ , կան Մեծ . Ամբոսիոս Գալթեանի , Գեր . Նիկ . Աւգերեանի պատմութեան գործերն , բայց առաջնոյն՝ շատ տեղ իր շիթով ու ճապաղ ձեւով՝ տղայոց անյարմար է , երկրորդինը՝ բարձր դասու աշակերտաց յարմարագոյն :

Դասագրքի այս պէտքը ընդ համար ահա փորձ մը կ'ընեմ՝ տեսչական պաշտօնավարութեան դոյլն ինչ փորձառութեամբս՝ Զմիւռնիոյ Ս . Մեթոդեան վարժարանի մէջ : Արդարեւ ոչ միայն տեսապէս , այլ ամենօրեայ փորձով դիտած եմ որ աշակերտ մը դիւրաւ չմբռներ աղգաց պատմութեան անմիջական կարեւորութիւնն և ստէպ այս ուսումը կ'աւարտէ , պատմական գէպքեր , թուականներ և անուններ կը շարէ . առանց հասկնալու . թէ ինչ կը խօսի , առանց պատմած ժողովրդեան ոգւոյն և բարուց վերահասու լինելով՝ դաս

մը քաղելու : Այսպէս թուժակի պէս պատմութիւն սերտելէն լաւագոյն է բնաւ չուսնիլ : Այս պատմական ամբողջութիւնը կ'պատահի երբ դասատուն՝ թէեւ հմուտ՝ աշակերտին կարողութեան աստիճանը չը նկատեր եւ շատ գեղեցիկ բաներ օգին կը խօսի . երբ միայն կը խօսի անոր յիշողութեան , որ կրնայ մոռացիտ լինիլ , առանց իմացականութիւնը կրթելու . երբ անխըտիր մի եւ նոյն դասը կ'աւանդէ ստորին , միջին եւ բարձր դասերու աշակերտաց , որ տարբեր մտային սնունդի պէտք ունին . երբ վերջապէս պատմութեան դասատուութիւնն իրեն յատուկ պաշտօն մը չընէր , եւ կըստիպուի ուրիշ դասերու ալ կոչուած լինելուն՝ հարեւանցի ուսցընել կամ տասն տարու աշակերտի մը ձեռքը տալ պատմագիր մը , զոր քսան տարեկան պատանին անգամ հազիւ կարող է ըմբռնել ու մարտել , կամ հարց ու պատասխանիով կը ճատ , անհամ դասագիրք մը դոց ընել տալ , որու մէջ այսօր չը հասկնալով սորվածը աշակերտը վաղը կը մոռնայ :

Առհասարակ եթէ մանկուոյն մըտքին աւելի հսկելի եւ հետաքրքրաշարժ ուսում մը կայ , այս ալ պատմութիւնն է . սակայն ինչ դառն ու սոսկալի փուշերով կը ներկայի անոնց եւ անհաւելին տաղտուկ ու նեղութիւն կը պատճառէ , փոխանակ մտաւորական կըրթութիւն եւ բարոյական դաս մը դառնալու : « Ալեցէն ցութ տարեկան տըղայ մը , կ'ըսէ Պ. Լամէ Ֆլէօրի , արդէն կատարուն ճաշակ մ' ունի բարին չարէն , արիութիւնը վատութենէ , մեծանձնութիւնը տկարութենէ զանազանելու : Բաւական է միայն նորա դիտողութեանց օգնել , եթէ դասատուն կը փափաքի զանի խորհրդածելու զրգել որպէս զի անոր բանա-

կանութիւնը տրուած դասէն կրկին օգուտ քաղէ » :

Սակայն իմ նպատակս բողորովին Պ. Լամէ Ֆլէօրիին պատմութեան ձեռնհասեւիլ չէ : Այս ձեռն՝ թէեւ իր առաւելութիւններն ունի , պատմական եղելութիւններ զատ ու անփոփ նկարագրելով , սակայն հեղինակը ստէպ կ'երկարաբանէ եւ ուր ուրեմն աւելորդ խորհրդածութիւններով պատմութեան չափն ու կարեւորութիւնը կը տկարացնէ : Իմ բռնելիք ընթացքս աւելի պարզ է եւ համեստ : Այժմ հին եւ նոր աղգաց պատմութեան օտար դասագիրքեր այնքան առատ են , այնքան կ'ճգնին նշանաւոր հեղինակներ այս ուսումն մանկանց դիւրամատոյց առնել , որ միայն ընտրութեան դժուարութիւն կը կրեմ : Այս դժուարութիւնը կ'աւելնայ երբ կը նկատեմ որ իւրաքանչիւր պատմագիր իր ազգին ոգւոյն եւ հանգամանաց համաձայն ձեւած է ընդհանուր պատմութիւնը , այնպէս որ եւրոպացի պատմախօս դասատուն անգամ՝ որչափ ընտիր եւ կատարուն դասագրքի առջեւ դնուի , դարձեալ պէտք կըզգայ իր աշակերտաց մտաւոր վիճակին յարմար բուն մը խմբագրել կամ բերանացի պատմել :

Ուստի արժան դատեցի եւ ես , միշտ պատմութեան դասագրքեր թըղթաւելէն ետեւ՝ եւ ոչ միայն ստրկօրէն հետեւիլ , այլ ընտրել եւ աղատօրէն յօրինել այնպէս որ կարելի լինի ծառայել այս դասագիրքս մեր նորուս մանկանց կամ նախակրթական դպրոցներու :

Այժմ քանի մը խօսք ըսեմ դասագրքիս կարգին եւ պարունակութեան վրայ : Համառօտ նշանակել իւրաքանչիւր կարեւոր ժողովրդեան մէջ պատահած էական դէպքերը , անոր բարոյական , մտաւոր եւ քաղաքական վի-

Ճակը կարելի եղածին չափ պարզութեամբ ցոյց տալ, այս եղած է Ընդհանուր Պատմութեան նպատակը, որ երեք հատորէ պիտի բաղկանայ, պատմութեան երեք գլխաւոր բաժանման համեմատ: Առաջին հատորն էր Կոստանթնուպոլիս, առաջնոյն մէջ ամփոփելով Արեւելեան գլխաւոր ժողովրդաց, ինչպէս նաեւ Հայոց վրայ՝ պատմական իրողութիւնները, և երկրորդ հատորն էր Եւրոպայի Գաղութները, Կարճեղանայեաց եւ Հռովմայեաց պատմութեան յատկացընելով: Իսկ միւս երկու հատորները, Պիքին և Նոր Դարուց պատմութիւնը պիտի պարունակեն:

Առաջին մասին սկիզբը՝ Ընդհանուր Գիտելիք մակագրով հատուած մը գրի, իբրեւ ներածութիւն, որ թերեւս ու մանց անպատեհ թուի, տղայոց համար անյարմար դատելով, սակայն ըստ իս կարեւոր է, վասն զի մասնաւոր պատմութեան մը դռնէն չմտած սէտք է որ աշակերտը պատրաստուի, հետեւելիք ճամբան հեռուէն նկատէ և ընդհանուր տեղեկութիւններ ստանայ մարդկային ազգի նախնական վիճակին, ցեղական բաժանմանց, լեզուաց, աշխարհական գրից վրայ, նոյնպէս կրօնական եւ քաղաքական զանազանութեանց վրայ: Ի հարկէ տարրական գրքայի մը մէջ կարելի և պէտք չէ այս նիւթերուն վերայ երկարօրէն ճառել, և այն կտորներն որ ընդարձակութեան

կամ բացատրութեան կարօտ են, դասատուին կը մնայ պարզել, պատմական թերութիւնները լեցնել, աշակերտին ձեռքն իբրեւ առաջնորդ տալով սոյն դասագիրքս:

Ամեն դժուարին խնդիրներ այժմ դասատուին հնարամտութեամբ կրնան դիւրմբռնելի դառնալ տղայոց. նոյնպէս եւ պատմութիւն մը որչափ կատարեալ լինի դարձեալ անկենդան եւ անարդիւն տառ կը մնայ, առանց դասատուին բանաւոր և հմտողի խօսքին: Նա պարտի կանխաւ ընտրել իր դասելու եղանակն, իւրաքանչիւր դասու աշակերտաց մտաւորական ընդունակութեան յարմարցնելով իր սճն ու իմաստը: Օգտակարագոյնն է, ըստ իս, ներկայ դասագրքիս նկատմամբ, մաս առ մաս կարգացնել աշակերտաց սովորման մէկ գլուխ, ապա բերանացի լուսաբանել համառօտ կէտերն, տղոց միտքն ու սիրտը կրթելու նպատակու ալլաձեւ հարցումներ ընել, եւ հոսկ ուրեմն դասին իմաստը շարագրել տալ թէ տղաք արդէն միտքը ի շատէ գրելու վարժութիւն ունին:

Յուսով եմ որ հասարակութիւնն եւ ի մասնաւորի դասատուք Ընդհանուր Պատմութեան այս առաջին մասիս ներողամիտ ընդունելութիւն ցոյց տալով՝ կը քաջալերեն զիս շարունակել և միւս մասերն ու հրատարակել:



## Հ Ա Ն Գ Ի Ս Տ

### Տ. ԿԱՐԱՊԵՏԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

**Ս.** Աթուղյա Միաբաններէն Գեր. Տ. Կարապետ Արքեպիսկոպոսն, վեցամեայ տաժանակիր հիւանդութենէ զինի, փոխեցաւ առ Տէր Երեմիայ Մայիսի 7ի հասակի 65 ամաց, 7ի Թախծութիւն համակելով Միաբանական Ուխտս:

Օծումն և յուզարկաւորութիւնն կատարեցաւ վայելուչ հանգիստ, և առնաբանութեամբ Ս. Պատրիարքի: Յուզարկաւորութեան և Թաղման հանգիսին ներկայ էին ոչ միայն Միաբանք և Հայազգի քաղաքացիք տեղւոյ, այլ և օտարազգիք և Յունաց ու Լատինաց վանուց Թարգմաններն պահակներով հանդերձ: Հանգուցելոյն մարմնն ամփոփեցաւ Սուրբ Փրկչի Եկեղեցւոյ գաւթին մէջ 7ի շարս Պատրիարքաց եւ Եպիսկոպոսաց: Տ. Կարապետ Արքեպիսկոպոսն Ս. Աթուղյա բազմամեայ և աշխատաւոր Միաբաններէն էր: Միաբանական Ուխտիս մէջ մտնելէն զինի՝ բարձրացած է յաստիճան սարկաւագութեան, վարդապետութեան եւ եպիսկոպոսութեան: Վարած է զանազան պաշտօններ, յորոց գլխաւորներն են՝ 7ի Պօլիս՝ Փոխանորդութեան պաշտօն, 7ի Մարաշ՝ քարոզութեան պաշտօն, 7ի Ս. Աթուղս Լուսարարապետի, Խորհրդականի և Դպրոցի Տեսչի պաշտօն, և այս ամեն պաշտօնակատարութեանց մէջ միշտ հաւատարիմ գտնուած է և ջանադիր:

Հանգուցեալն աղօթասէր, ընթերցասէր և ուսումնասէր Միաբաններէն մին էր: Ունէր սեպհական Գրադարան, զոր հետ զհետէ կը ծոխացընէր նորաստիպ գրքերով: Առանձական կենաց մէջ բարեկենցաղ էր եւ վարուք անբամբաս: Այսպիսի Միաբանական անդամոյ մահն ցաւալի է անշուշտ, բայց Վերին Նախախնամութեան կամքն եւս պաշտելի է:

Ուստի կը մնայ մեզ միայն Աստուծոյ կամքն օրհնել և յաւիտենական երանութիւն մտել ինչ Հանգուցելոյն:

# ԵԶՐԻ ԵՒ ՆԷԵՄԻԻ ՄԵՋ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԱԾ ԳԼԽԱԽՈՐ ԴԵՊՔԵՐԸ

Ք. Ա. 536 ին Արարու իւր թագաւորութեան առաջին տարին գերի Հրէից իրենց հայրենի երկիրը վերագառնալու թող կը տայ, վերագարձնելով միանգամայն Տաճարէն առնուած սրբազան անօթները: Երուսաղէմ՝ հասնելով կ'սկսին երկրպագութիւնը վերահաստատել, Զոհի սեղան մը կը շինեն, տաղաւարաց տօնը կը սօնախմբեն ու երիտասարդաց երգերովը ու ծերունիներուն արտասուօքը՝ որոնք առաջին տաճարին շքեղութիւնը կը յիշէին, տաճարին հիմերը կը գնեն:

Սամարացիք սոյն գործին մասնակցելու փափոք կը յայտնեն, սակայն Հրէից առաջնորդներէն կը մերժուին, որուն վրայ Պարսից թագաւորը կը գրգռեն, որպէս զի տաճարին շինութիւնը արգելէ: Գարեհի թագաւորութեան ատեն իրենց մարգարէներուն քաջալերութենէն շարժեալ սոյն իշխանին մասնաւոր արտօնութեամբը եւ օգնութեամբը տաճարին շինութիւնը կը շարունակեն: Անմիջապէս՝ որ տաճարը կը լմնցնեն, կը սրբգործեն կամ կրնձայեն զայն ու Պասեքը կը կատարեն: Արտաշէս երկայնաձեռնի իշխանութեան ատեն Եզր երկրորդ գաղթականութեամբ Երուսաղէմ կ'երթայ ձեռքը թագաւորական նամակով, ուր իւր բացակայութեան ատեն ընդդէմ Մովսիսեան օրինաց շատ մը խառնակ ամուսնութիւններ տեղի ունեցած տեսնելուն, Եզր խիստ կը վշտանայ, և առ Աստուած զղջման և ապաշխարութեան աղօթք մի մատուցանելով, չարիքը դարմանելու միջոցներ ձեռք կ'առնու:

Նէեմի Շօշ մէջ իւր հայրենեացը

ողբալի վիճակը կը լսէ: Իւր տխրութիւնը թիւնը թագաւորէն կը գնուի, և որ հարցաքննութեամբ պատճառը իմանալով իւր բաժակակրին թող կ'ուտայ Երուսաղէմ երթալով՝ անոր պարիսպները շինելու (Նէեմի Ա. Բ. 4-5): Հրէայք շինութեան գործը կը սկսին և թէպէտ բազմաթիւ խռնդոսներ կեղծն իրենց դիմաց, սակայն և այնպէս այս գործը կը կատարելագործեն: Ժողովուրդը իրենց աղքատութեանը և հարուստ Հրէից հարստահարութեան և վաշխուռութեանը վրայ կը գանգատեն, որով Նէեմի կը պարտաւորի իւր անշահախնդրութիւնը բացատրել եւ կը քաջալերէ զանոնք իրենց գէշ ընթացքէն դադարել և իւր գրաւական առնուած ստացուածքները անոնց ետ դարձնել: Քաղքին ամբողջութիւնը լմնալով պահպաններ կը կարգուին և Աստուտութիւնը Նէեմիի եղբօրը Անանիասի պալատի կառավարչին կը տրուի: Եզր ժողովրդեան օրինաց գիրքը կը կարգայ, որուն մէջ իմաստը անոնց այս ժամանակ ընտանի եղած միայն Քաղդէարէն լեզուաւ կը բացատրէ: Տօները և խորութիւնները կը պահուին: Աստուծոյ հետ ունեցած ուխտերնին կը նորոգուի և կը կ'ընդունի: Սակայն գեռ Երուսաղէմի ժողովուրդը բաւական բազմաթիւ չլրալով՝ շինական տեղերէ մարդ ժողովելով կը լեցուի: Քահանայից ու Քահանայապետաց յաջորդութեան մասնաւոր յուցակներ կը դրուի ժողովրդեան, պարիսպները կրնձայուին և այս գիրքերը Արարողական կամ Միսական կանոններով և քանի մը յորդորներով կը վերջանան:

Ի խորհմանութեանց  
Յ. Տաղաձեռն:



# Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Տաճկաստանի Նոր Կայսեր Վեհափառ Սուլթան Մուրատ Խանի գահակալութեան առթիւ երեք օր ճրագովառութիւն եղաւ քաղաքիս մէջ :

— Հալէպի Ռուսաց Հիւպատոս Պ. Իւանով ընտանեօք հանդերձ յուստ եկաւ 'ի Ս. Երուսաղէմ, չընդայեց բոլոր Ս. Տեղիքն, ամեն աղքատ վանքերն ու հաստատութիւններն և վերադարձաւ իւր պաշտօնատեղին :

— Զատիկէն երկու շաբաթ առաջ Ռուսաց վանուց կից դետնի վերայ վերաններ կային և կը լսուէր, թէ մի երեւելի Ռուս Ազնուականի կը պաականին : Սոյն Ազնուականն բռնած էր երեք սենեակ եւս Ռուսաց վանուց մէջ, բայց այն տեղ չէր բնակէր, այլ վրանաց տակ : Շարունակ կը տեսաւ յէր Ռուսաց Հիւպատոսի հետ, վանահօր հետ, ներկայ կը գտնուէր Զատկական հանդէսներուն, ինչպէս որ ներկայ գտնուեցաւ Զատկի երկու շաբաթի օրն մեր մեծաշուք հանդիսին 'ի Տաճարի Ս. Յակոբեանց :

Քանիցս ներկայ գտնուելով յունական ժամերգութեան Ս. Յարութեան տաճարի մէջ՝ հաղորդուեցաւ Ս. Գերեզմանի վերայ եւ ամեն Ս. Տեղիքն չընդայեցով վերադարձաւ :

Այժմ կը լսուի, թէ յիշեալ Ազնուականն եղած է Ռուսաց Կայսերի դի Ալէքսէյ Ալէքսանդրովիչն, որ Աթէնքէն ելնելով յեգիպտոս երթալու նպատակաւ, ծպտեալ կերպիւ եկած է 'ի Պաղեստին և քանի մի ժամանակէն զինի վերադարձած է առանց երբէք զինքն ճանաչեցնելու : Կը պատմեն թէ ծովապետութեան պաշտօնի մէջ կը գտնուի յիշեալ Կայսեր օրդին :

— Տեղ օր Գերմանական Հիւպատոսարանի թարգման մեր Հայագրի լեզուագէտ երիտասարդն Պ. Սրապին Մուրատեան, որ գրեթէ մի տարիէն 'ի վեր ճանապարհորդութեան մէջ կը գտնուէր, և գրեթէ բոլոր Եւրոպա շրջագայած է ամենայն հետաւոտութեամբ և քանիցս 'ի Բերլին Գերմանիոյ Կայսեր և թագաժառանգ Իշխանի տեսութիւնն փոյելած, վերադարձաւ 'ի քաղաքս և սկսաւ շարունակել իւր պաշտօնն :

— Մեծ. Պ. Յարութիւն Թ. Գալբազեան Հայագրի երիտասարդն, որ Աւստրիոյ Հիւպատոսարանի մէջ թըղթատորութեան Տեսչի պաշտօն կը վարէր, այժմ հաստատուեցաւ նաեւ թարգմանութեան պաշտօնի մէջ :

Հայ երիտասարդաց յառաջդիմութիւնն անշուշտ մեծ'ուրախութիւն է ամեն Հայասիրաց համար :

— Ամսոյս 21ին մինչ քաղաքիս Կառավարին 'ի Գաղա կը գտնուէր քանի մի պաշտօնականերով հանդերձ եւ Հաշուեկալն 'ի Պէրութ, բաւականին մեծ յուզումն եղաւ քաղաքիս մէջ : Առաւօտեան ժամանակ յանկարծ լուր տարածուեցաւ, որ Տաճիկք յետ կէս աւուր աղօթից պիտի յարձակին Քլբիստոնէից վերայ և կոտորեն : Քաղաքի խանութներն փակուեցան, խառնաշփոթ աղաղակներ տարածուեցան ամեն ուրէք, Տաճիկք կը փոխէին Քրիստոնեաներէն, կարծելով թէ Քլբիստոնեայք ապստամբած են : Քրիստոնեայք կը փոխէին Տաճիկներէն՝ կարծելով թէ պիտի կոտորուին : Լատին ժողովուրդն խոնեցաւ Լատինաց վանուց մէջ : Հայք խոնեցան Հայոց վանուց մէջ : Իսկ Յունաց վանքն ժողովուրդն չընդունեց :

Յուզումն գրեթէ ընդհանուր էր քաղաքի բոլոր բնակչաց մէջ, բայց թէ

ուստի՞ ործարծուած էր և և ինչպէս  
հանրացած, ամենքն անգէտ էին այս  
մասին։ Ոմանք կ'ասէին Լատինաց վան-  
քէն ծագած է, ոմանք կ'ասէին՝ իբր  
թէ մի Տաճիկ Շէխէն լուծած է և և  
ալն և այլն։ Նոյն իսկ Կառավարու-  
թիւնն բոլորովին անգիտակ էր։ Ուստի  
և Կառավարչի Տեղապահն սկսաւ շու-  
տով վանքերն վազել և խնդրել որ ան-  
դորրութեան յորդոր կարգան ժողո-  
վըրդեան, յայտնելով՝ որ տարապարտ  
տարածուած լուր է և բնաւ երկիւղի  
տեղիք չը կայ։ Շուտով սկսաւ զօրք  
կանգնեցնել թէ՛ վանքերու տուջև, և  
թէ՛ գլխաւոր ճանապարհներու և շու-  
կաներու մէջ և ապահովութեան յոր-  
դոր կարգով տալ, որ ամենեքեան ի-  
րենց աներն դառնան, խանութներն  
բանան և իրենց գործով պարապին։  
Ժողովուրդներն վանքերէն իրենց տնե-  
րն դարձան, բայց երեկոյեան մօտ  
լինելով՝ շատ խանութներ չը բացուե-  
ցան։

Երկրորդ օրն Կառավարին Գաղա-  
շէն քաղաքս ժամանեց և յատկապէս  
պաշտօնական գրեր գրեց ամեն վան-  
քերուն և Հիւսպատոսարաններուն, որ  
ապահով լինին, յայտնելով թէ բոլորու-  
լին անստոյգ տարածայնութենէ յա-  
ռաջ եկած է յուզումն և ինքն կը հե-  
տախուզէ շարժառիթն գտնել։ Բայց  
վարկպարազի խօսքերէ զատ ուրիշ բան  
չը կայ։ Բաց յայտնանէ, յատուկ ժողով  
կազմեց Սարայի մէջ և իւրաքանչիւր  
ազգէ երեքական անձիւք ժողովելով  
նոցա ևս յայտնեց, որ անդորրութեան  
յորդոր կարգան իրենց ժողովելին։  
Այս ամեն զգուշութիւններէն զատ՝  
պահանքներն եւս աիւ և գիշեր կը շը-  
ջին քաղաքի մէջ բնակչաց ապահովու-  
թեան համար։

Մուացանք ասել, որ Երուսաղէ-  
մի յուզման լուրն նոյն օրն չըջակայ

գիւղերէլոյ մէջ և և տարածուելով՝  
բաւական երկիւղ պատճառած է բը-  
նակչաց։ Սակայն այժմ գիւղերն եւս  
անդորրութեան մէջ են։

ՆՈՐ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՇԻԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ

Վ.Ա.Հ.ՐԱՄԱՅ Վ.Ա.ՐԴԱՊԵՏԻ

ԲԱՆ

Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՅԾԳՈՒՄՆ

ԼԵՒՈՆԻ Գ.ԱՐՔԱՅԻ ՀԱՅՈՑ

Գին 2 Դանկան։

ԳՈՐԾԻ ԱՌԱՔԵԼՈՑ

ԾՈՑԱԿԻՐ

Գին 8 Դանկան։



# ՅԱՆԿ

## Մ Ա Յ Ի Ս

|                                          |         |
|------------------------------------------|---------|
| Բարոյական վիճակ Քաղաքական կուսակցութեանց | 97-102  |
| Պաշտօնական յայտարարութիւն Աղգային        |         |
| Կրօնական ժողովոյ . . . . .               | 102-103 |
| Ոտնալուայի հանդէս . . . . .              | -105    |
| Յայտարարութիւն ՓՈՐՁ Աղգային և գրա-       |         |
| կանական եռամսեայ հանդէս . . . . .        | 106-108 |
| Տեղեկութիւն Յեղեսիայէն . . . . .         | 109-110 |
| Յիսուսի վերջին շաբաթ, Խաչի ծառ և կու-    |         |
| րուսերոց յիմարութիւն . . . . .           | 110-113 |
| Համառօտ ընդհանուր պատմութիւն դըպ-        |         |
| րոցաց համար . . . . .                    | 113-116 |
| Հանգիստ Տ. Կարապետի Արքեպիսկոպոսի . .    | -117    |
| Եղբի և Նէեմի գրոց մէջ պարունակուած       |         |
| գլխաւոր դէպքերը . . . . .                | -118    |
| ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . . . . .                | 119-120 |
| Նոր հրատարակութիւնք . . . . .            | -120    |

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Միօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մ'կուլէս  
ութածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիէ, ճանապարհի ծախքով  
միասին, կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տետրակ առնել աւելորդ պէտք է ամեն մէկ տետրին շորս գա-  
հեկան վճարէ :